ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.09.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-54/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.03.2016թ. թիվ 1/73-3/10320-16 և 19.04.2016թ. թիվ 1/73-1/12388-16 գրություններով ներկայացված «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06942663) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-54/16 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-54/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 02.09.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) 18.03.2016թ. գրության հիման վրա,

22.03.2016թ. թիվ 1/73-3/10320-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) 12.04.2016թ. թիվ 1396 գրության հիման վրա, 19.04.2016թ. թիվ 1/73-1/12388-16 գրությամբ դիմել է Կենտրոնին՝ խնդրելով ուսումնասիրել «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. <u>«Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 24.03.2016թ. թիվ 01/04.1/1161-16 և 20.04.2016թ. թիվ 01/04.1/1585-16 գրություններով դիմել է «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի 24.03.2016թ. թիվ 01/04.1/1161-16 գրությանը՝ Ընկերությունը 25.04.2016թ. գրությամբ հայտնել է, որ չվճարված գումարը եղել է տարիների ընթացքում կուտակված տույժի մնացորդ, որն առաջացել է Ընկերության փոխանցումների և հարկային քարտում երևալու տարբերության արդյունքում, որի չափը կազմել է մոտավորապես 25 000-30 000 ՀՀ դրամ՝ բոլոր հարկատեսակների գծով, որի մասին Ընկերությունը տեղեկացվել է հետագայում՝ հարկային տեսչության կողմից:

Ընկերությունը տեղեկացրել է, որ նշված գումարը արդեն վճարվել է գերավճարով և «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն հանդիսանում է ՀՀ-ում բարեխիղճ հարկատու:

Ընկերությունը գրությամբ խնդրել է հաշվի առնել այն հանգամանքը, որ բոլոր հարկատեսակների գծով վճարված ընդհանուր գումարը եղել է աննշան, ինչպես նաև Ընկերությունը վճարելով պարտքը, ունեցել է գերավճար, ուստի Ընկերությունը խնդրել է չներառել Ցուցակում:

«Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 28.07.2016թ. ժամը 16:30-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-54/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն 18.03.2016թ. գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն հայտնել է, «ԱՀԱԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով գնման ընթացակարգին «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված եզրակացության հիման վրա:

Պատվիրատու 1-ը, պատշաճ ծանուցված լինելով 28.07.2016թ. ժամը 16:30-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-54/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն 12.04.2016թ. թիվ 1396 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ «ՆՀԿ-ՊԸԾՁԲ-16/1» ծածկագրով գնման գործընթացին «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված եզրակացության հիման վրա մերժվել է:

Պատվիրատու 2-ը, պատշաճ ծանուցված լինելով 28.07.2016թ. ժամը 16:30-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-54/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. <u>ԳԲԽ-54/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 02.09.2016թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության 22.03.2016թ. թիվ 1/73-3/10320-16 և 19.04.2016թ. թիվ 1/73-1/12388-16 գրություններով ներկայացված «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

6. <u>ՍՑ-ԳԲԽ-54/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 22.03.2016թ. թիվ 1/73-3/10320-16 և 19.04.2016թ. թիվ 1/73-1/12388-16 գրություններով ներկայացված «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՀ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի-ի կարիքների համար կազմակերպված «ԱՀԱԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) մասնակցելու նպատակով «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն ***22.12.2015թ.*** հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է,

որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

3. Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 22.12.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ որոշել է Ընթացակարգի 1-ի 1-ին չափաբաժնի մասով «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Պատվիրատու 1-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 22.12.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

5. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին 25.12.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 163 867 ՀՀ դրամի չափով:***

6. Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 08.01.2016թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

7. ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՆՀԿ-ՊԸԾՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) մասնակցելու նպատակով «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն ***24.12.2015թ.*** հայտ է ներկայացրել:

8. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր***

Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

9. Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 24.12.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ որոշել է Ընթացակարգի 2-ի 1-ին չափաբաժնի մասով «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

10. Պատվիրատու 2-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 24.12.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

11. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին 08.01.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 164 354 ՀՀ դրամի չափով:***

12. Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 11.01.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

7. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 18.03.2016թ. գրությունը և կից փաստաթղթերը, «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի 12.04.2016թ. թիվ 1396 գրությունը և կից փաստաթղթերը՝ հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն

ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած

հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն ***22.12.2015թ. և 24.12.2015թ.*** մասնակցության հայտեր է ներկայացրել համապատասխանաբար՝ ՀՀ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԱՀԱԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով և ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՀԿ-ՊԸԾՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգերին:

Ընկերությունը Ընթացակարգերի մասնակցության հայտերի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտերը ներկայացվելու օրերի դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.12.2015թ. և 08.01.2016թ. տրամադրված եզրակացությունների համաձայն՝ Ընկերությունը հայտերը ներկայացնելու օրերի (22.12.2015թ. և 24.12.2015թ.) դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ***:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***22.12.2015թ.*** մասնակցելով «ԱՀԱԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում և ***24.12.2015թ.*** կրկին հայտ է ներկայացրել ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՀԿ-ՊԸԾՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով,*** եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, ***եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

Հիմք ընդունելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 22.03.2016թ. թիվ 1/73-3/10320-16 և 19.04.2016թ. թիվ 1/73-1/12388-16 գրություններով ներկայացված «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 06942663) պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 22.03.2016թ. թիվ 1/73-3/10320-16 և 19.04.2016թ. թիվ 1/73-1/12388-16 գրություններով ներկայացված «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06942663) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ոսկանյան Լուսինե**

Անդամ՝ **Մնացականյան Արայիկ**